ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Ա/Ձ Էդուարդ Մանուկյան -ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/91 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Սեղան աշակերտական, բարձրության կարգավորմամբ երկտեղանի՝ 5-12-րդ դասարանների համար - մետաղական կմախքով, գույները և չափերը՝ Առողջապահության նախարարության 28.03.2017թ. 12-Ն հրամանի և ԳՈՍՏ 11015-93 համապատասխան, չափսերը՝ 1200(ե)x500(լ)x(640մմ-760մմ(բ)), բարձրությունը մեխանիկական եղանակով կարգավորվող: Սեղանի աշխատանքային հարթության համար պետք է օգտագործվի լամինացված ՓՏՍ՝ 18մմ հաստությամբ: Լամինացված ՓՏՍ-ի աշխատանքային հարթության անկյունները պետք է կլորացվեն R=30մմ շառավղով, եզրերը շրջափակվեն 1-2մմ հաստության պլաստիկ եզրաժապավենով (PVC): Աշխատանքային հարթությունը պետք է լինի անփայլ, մետաղական կմախքին ամրանում է 4մմ տրամագծով 40մմ –ոց 10 պտուտակներով: Սեղանի առջևը փակվում է 1150x350մմ չափսերի՝ 18մմ հաստությամբ, եզրերը 0.8-1մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC) շրջափակված լամինացված ՓՏՍ-ով, որը տեղադրվում է սեղանի աշխատանքային հարթության տակից և ամրացվում է մետաղական կմախքին: Սեղանի կմախքը պետք է լինի մետաղական քառանկյուն խողովակներից (25x25x2.0մմ), անկյունների միացումը զոդման եղանակով 45 աստիճան հատվածքով, կմախքի արտաքին չափերը՝ 1150x400մմ, որին զոդման միջոցով ամրացվում են մետաղական ոտքերը: Սեղանի 2 զույգ մետաղական ոտքերից յուրաքանչյուրը իրենցից ներկայացնում է կարգավորվող բարձրությամբ երկու տրամաչափի քառանկյուն խողովակից՝ արտաքին և ներքին (միջուկ), բաղկացած կոնստրուկցիա: Արտաքին խողովակի չափերը՝ 25x25x2.0մմ (վերևի խողովակ), բարձրությունը՝ 565մմ: Ներքին խողովակի՝ միջուկի չափերն են՝ 20x20, իսկ պատի հաստությունը 1.8-2.0մմ, բարձրությունը՝ 565 մմ: Սեղանի

	ոտքերի արտաքին խողովակները զոդման եղանակով ուղղահահայց միացվում են գետնին հորիզոնական դիրքով դրված մետաղական քառակուսի խողովակից պատրաստված՝ 410մմ երկարությամբ հենակին, չափսերը՝ 25x25x2.0մմ: Հենակին միացվող 2 ոտքերի միջև հեռավորությունը՝ 120մմ: Հենակի եզրերը պետք է խցանված լինեն պլաստիկե բաց գույնի խցաններով՝ 5-6մմ հաստությամբ: որը կապահովի հատակից մետաղական խողովակի առնվազն 4 մմ բարձրություն: Սեղանի ոտքերը պետք է ունենան 40մմ քայլով բարձության կարգավորման 4 հնարավորություն, որոնք յուրաքանչյուր կողմից յուրաքանչյուր ոտքին ֆիքսվում են 2 հատ հեղուսե մանեկային կապով: Զոդման կարանները պետք է լինեն մշակված, ողորկ, կմախքը ամբողջությամբ լինի ավազահարումով յուղազերծված և կարմիր գույնի բարձրակարգ ներկանյութով ջերմային փոշեներկված: Սեղանի երկու կողմերում պետք է լինեն մետաղական կախիչներ, որոնք եռակցվում են սեղանի կմախքին վերևից 2 կողմից՝ հետնապատից 132մմ հեռավորության վրա: Նմուշը /նկարը / կցվում է: Աթոռ աշակերտական՝ 5-12-րդ դասարանների համար - մետաղական հիմքով, բարձրությունը մեխանիկական եղանակով կարգավորվող: Նստելատեղը և մեջքի հենակը պետք է պատրաստված լինեն նրբատախտակից՝ 9-10մմ հաստությամբ, գույները և չափերը՝ Առողջապահության նախարարության 28.03.2017թ. 12-Ն հրամանի և ԳՈՍ 11016-93 համապատասխան: Աթոռի նստելատեղի չափսերը՝ 360x400մմ, նստելատեղի մակերևույթը պետք է ունենա (D=240մմ) փոսիկ, փոսիկի խորությունը 10-12մմ: Նստելատեղի նրբատախտակը աթոռի մետաղական կմախքի վերևի շրջանակի հետևի և կողային երկու կողմերից պետք է դուրս գա համապատասխանաբար 25մմ, իսկ դիմացի եզրից՝ 50մմ, որը պետք է դեպի ներքև կորացնել 90º-ով, (R=20-50մմ): Նրբատախտակի եզրերը պետք է լինեն ողորկ, մշակված: Աթոռի մեջքի հենակի չափսերը՝ 320x180 մմ, հենակը ողջ երկարությամբ պետք է դեպի ներս աղեղաձև կորացնել (R=600մմ): Նրբատախտակը կմախքին միացվում է միջանցիկ հեղուսե մանեկային ամրացումով: Նրբատախտակի կողմից հեղյուսը պետք է լինի ողորկ, իսկ եզրերը՝ նրբատախտակի հարթության վրա: Աթոռի կմախքը պետք է լինի մետաղական քառանկյուն խողովակներից (25x25x2.0մմ), անկյունների միացումը զոդման եղանակով 45 աստիճան հատվածքով, կմախքի արտաքին չափերը՝ 310x325մմ, որին զոդման միջոցով ամրացվում են մետաղական ոտքերը: Աթոռի 2 զույգ մետաղական ոտքերից յուրաքանչյուրը իրենցից ներկայացնում է կարգավորվող բարձրությամբ երկու տրամաչափի քառանկյուն խողովակից՝ արտաքին և ներքին (միջուկ), բաղկացած կոնստրուկցիա: Արտաքին խողովակի չափերը՝ 25x25x2.0մմ (ներքևի խողովակ), բարձրությունը՝ 315մմ: Ներքին խողովակի՝ միջուկի չափերն են՝ 20x20, իսկ պատի հաստությունը 1.8-2.0մմ, բարձրությունը (վերևի խողովակ), բարձրությունը՝ 315մմ: Աթոռի ոտքերի արտաքին խողովակները զոդման եղանակով ուղղահահայց միացվում են գետնին հորիզոնական դիրքով դրված մետաղական քառակուսի խողովակից պատրաստված 380մմ երկարությամբ հենակին, չափսերը՝ 25x25x2.0մմ: Հենակին միացվող 2 ոտքերի միջև հեռավորությունը՝ 100մմ: Հենակի եզրերը պետք է խցանված լինեն պլաստիկե բաց գույնի

	խցաններով՝ 5-6մմ հաստությամբ: Աթոռի ոտքերը պետք է ունենան 40 մմ քայլով բարձության կարգավորման 4 հնարավորություն, որոնք յուրաքանչյուր կողմից յուրաքանչյուր ոտքին ֆիքսվում են 2 հատ հեղուսե մանեկային կապով: Աթոռի նստելատեղի բարձրությունը հատակից մինչև նստելատեղի երեսը՝ 380-460մմ, իսկ հատակից մինչև մեջքի հենակի վերևի եզրի բարձրությունը 700-860մմ: Աթոռի նստելատեղի և մեջքի հենակի կազմած անկյունը պետք է լինի 95-130º, իսկ հանգույցը՝ կորացվի R=60մմ շառավղով: Զոդման կարանները պետք է լինեն մշակված, ողորկ, կմախքը ամբողջությամբ լինի ավազահարումով յուղազերծված և կարմիր գույնի բարձրակարգ ներկանյութով ջերմային փոշեներկված: Ուսուցչի սեղան, չափսերը՝ 1200x600x760մմ: Սեղանի աշխատանքային հարթության, կողապատերի (ոտքերի), հետնապատի և գզրոցի համար պետք է օգտագործվի լամինացված ՓSU 18մմ հաստությամբ, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Աշխատանքային հարթության եզրերը պետք է շրջափակվեն 1-2մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), ոչ աշխատանքային հարթության եզրերը պետք է շրջափակվեն 0.4մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC): Սեղանի առջևը փակվում է 18մմ հաստությամբ ՓSU-ով (դիմապատը)՝ որի չափսերն են՝ 1164x450x600մմ, որը տեղադրվում է սեղանի աշխատանքային հարթության տակից, եզրին հավասար և ամրանում է աշխատանքային հարթության եզրին (տակից) և կողապատերի (ոտքերի) ներսի մասին: Կողապատերի (ոտքերի) լայնությունը՝ 570մմ: Կողապատերի (ոտքերի) եզրերը կշրջափակվեն 0.4-1մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), իսկ հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին պետք է պտուտակների միջոցով ամրացվի ոտիկներ՝ 5-6մմ բարձրությամբ: Սեղանի աշխատանքային հարթության վերևի աջ և ձախ եզրային անկյուններում համակարգչային տեխնիկայի լարերի համար պետք է տեղակայվի միջանցիկ անցքեր՝ տեղակայված փակվող խցաններով: Սեղանը կունենա առանձին, 4 անիվի վրա շարժվող գզրոց, չափսերը՝ 410x460x690մմ, երեք դարակներով համապատասխանաբար չափսերով՝ 130-150; 130-150; 250-350մմ, հնարավոր առավելագույն խորությամբ, միասնական փականով փակվող, գզրոցի հետնապատը նույնպես պետք է լինի նույն ՓSU-ից, դարակները բացվում և փակվում են փափուկ փակվող, անաղմուկ սահնակներով սալյասկա (գնդիկավոր տեսակի ամերիկանկա) առնվազն 35մմ լայնությամբ: Սեղանը, կողապատերը (ոտքերը), դիմապատը, գզրոցը և պլաստիկե եզրաժապավենները պետք է լինեն նույն՝ ՓSU-ի, բնափայտի երանգներով ոչ շատ մուգ գույնի: Դարակները պետք է ունենան օվալաձև կամ ուղիղ մետաղական բռնակներ, որոնց երկարությունը պետք է լինի առնվազն 100մմ: Միացումներն իրականացնել երաշխավորված և թաքնված ձգանների միջոցով: Սեղանի ոտքերին պտուտակնրով պետք է ամրանան 4 պլաստիկե բաց գույնի խցաններ՝ 5-6մմ հաստությամբ, որը կապահովի հատակից առնվազն 4 -6 մմ բարձրություն: Գրապահարանը ամբողջությամբ (բացառությամբ հետնապատից) պետք է պատրաստված լինի լամինացված 18մմ հաստությամբ ՓSU-ից, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ, արտաքին չափսերը՝ 820x410x2100մմ (LxխxԲ), որից

		820x410x2000մմ (LxԽxԲ) հատվածը հանդիսանալու է օգտագործվող հատված, իսկ ստորին 820x410x100մմ (LxԽxԲ) հատվածը հանդիսնալու է որպես ոտք: 2 կողմերի 410x2100մմ ՓSU-ներն պետք է լինեն ամբողջական, իսկ ոտքի հատվածը դիմացից փակվի ՓSU-ով, միացումները պետք է կատարվեն մետաղական անկյունակներով, ոտքի հետևի մասը թողնել բաց: Գրապահարանի օգտագործվող հատվածը ունի 400մմ բարձրությամբ 5 դարակաշար, որոնցից վերևից սկսած 3-ը փակվում են եզրերը մշակված, թրծված սպիտակ, թափանցիկ 5-6 մմ հաստությամբ ապակե երկփեղկ դռներով՝ յուրաքանչյուրը որակյալ 3 ծխնիներով, իսկ ներքևի 2 դարակաշարը՝ լամինացված 18մմ հաստությամբ ՓSU-ից երկփեղկ դռներով՝ յուրաքանչյուրը 2 ծխնիով: Բոլոր դռները պետք է ունենան մետաղական բռնակներ: Դարակները պետք է պատրաստված լինեն լամինացված 18մմ հաստության ՓSU-ից, որոնց աշխատանքային հարթության եզրերը շրջափակվեն 0.8-1մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4-1.0մմ հաստության պլաստիկ եզրաժապավենով(PVC): Աշխատանքային հարթությունը պետք է լինի անփայլ, բաց գույնի (բացառությամբ սպիտակի): Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Դարակները պահող դետալները պետք է ունենան առնվազն 22 մմ երկարություն և 5մմ տրամգիծ: Գրապահարանի հետնապատը պետք է լինի 4մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից (ԴՎՊ) և նույն ՓSU-ի գույնի, որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8մմ է: Գրապահարանի ոտքերին պտուտակնրով պետք է ամրանան 4 պլաստիկե բաց գույնի խցաններ՝ 5-6մմ հաստությամբ, որը կապահովի հատակից առնվազն 4 -6 մմ բարձրություն: Կավճամագնիսային գրատախտակ՝ 3-փեղկանի կարճապահարանով, չափսերը՝ 1500x1000մմ (2 փեղկ Lx750x1000) Մագնիսային՝ կավճային 5 հարթությամբ, չափսը՝ (L)3000x(H)1000 մմ, պատից կախովի է: Գույնը՝ կանաչ, բաղկացած 4 հատ շառնիրային պետլյաներով (ծխնիներ) իրար ամրացված 3 էլեմենտից՝ 180 աստիճան պտտման հնարավորությամբ, եզրակալված ալյումինե պրոֆիլով: Գրատախտակի մակերեսը մագնիսական է, որը հնարավորություն է տալիս վրան փակցնել գունավոր մագնիսներ, գրառումները ջնջելիս օգտագործվում են միայն հատուկ ջնջոցներ, մասնագիտացված մաքրող հատուկ սփրեյի հետ համատեղ: Գրատախտակի չծալվող փեղկը ամրանալու է պատին չորս անկյուններից բարձորակ, ամուր պտուտակներով և դյուբելներով՝ նախատեսված համապատասխան ծանրաբեռնվածության համար: Աշխատանքային աթոռ ուսուցչի -Աթոռ ուսուցչանոցի և բոլոր դասասենյակների համար: Աթոռի մետաղական կմախքը պետք է պատրաստված լինի մետաղական սնամեջ օվալաձև (30x15x2.0մմ), կամ կլոր (Φ 20x2մմ) խողովակներից, հնարավոր է նաև խողովակը լինի երկու կողմերից հավասարաչափ սեղմված և ունենա կլորացված ուղղանկյան ձև: Աթոռի մետաղական կմախքի զոդման կարանները պետք է լինեն մշակված, ողորկ և փոշեներկված բարձրակարգ սև գույնի ներկանյութով: Նստելատեղի բարձրությունը հատակից 450մմ,

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Эдуард Манукян ИП, в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿՍՍԼԷԱՁՄՊԲ-25/91 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	Թիկնակի բարձրությունը հատակից 850մմ: Նստելատեղի չափսերն են՝ 420x385մմ (առնվազն): Թիկնակը և նստելատեղը պատրաստված լինեն 8-10 մմ հաստության նրբատախտակից, որին ամրացվում է առնվազն 15-25 մմ հաստության և 20-30 կգ/մ3 խտության սպունգ: Թիկնակը և նստատեղը երեսպատված կլինեն հաստ, որակյալ, ամուր, դժվարամաշ կտորով, գույները համաձայնեցնել պատվիրատուի և դպրոցի տնօրինության հետ: Նստելատեղը և թիկնակը առանձին են իրարից: Թիննակի վերևի հատվածում և մետաղական և փայտային մասերը ունեն կիսաշրջանի, օվալաձև տեսք: Թիկնակի պաստառապատված մասի չափերն ըստ նկարների են 400մմx300մմ: Ոտքերի եզրերը(ծայրերը) պետք է խցանված լինեն պլաստիկե սև գույնի խցաններով, որոնց կողային պատերի հաստությունը՝ 2մմ, տակի մասինը՝ 4-6մմ: Նմուշը /նկարը/ կցվում է: Հագուստի կախիչ՝ կահույքի չափերն են 2040մմx1000մմx250մմ: Կահույքը իրենից ներկայացնում է հագուստի համար կախիչ՝ 9 տեղանոց, մետաղական կախիչներով՝ շախմատաձև դասավորությամբ, պատից ամրացվող: Այն պետք է պատրաստված լինի 18մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ից, եզրերը պետք է շոշափվեն 1-2մմ հաստության պլաստիկե եզրակալներով (PVC): Կախիչը պետք է բաղկացած լինի ուղղահայաց և հորիզոնական լամինացված ՓՏՍ-ներից, որոնք պետք է ունենան համապատասխանաբար 1000x120x18մմ և 2040x120x18մմ չափեր: Կախիչը գլխավերևում պետք է ունենա հորիզոնական դարակ, որը պետք է պատրաստված լինի 2040x250x18մմ չափի լամինացված ՓՏՍ-ից, արտաքին անկյունները կլորացված: Հորիզոնական դարակի տակ անհրաժեշտ է նախատեսել առնվազն 3 դարակակիր՝ ամրության ապահովման համար: Մետաղական կախիչների միջև առանցքային հեռավորությունը պետք է լինի 240մմ: Մետաղական կախիչները պետք է պատրաստված լինեն Փ6մմ տրամագծով հոծ /առանց դատարկությունների/ չժանգոտվող պողպատից /AISI 304/ կամ ամրությամբ համանման չժանգոտվող պողպատից, որոնց գլխիկներին պետք է եռակցված լինեն չժանգոտվող պողպատից/կամ համանման (համաձայնեցնել Պատվիրատուի հետ)/ հոծ/առանց դատարկությունների/ գնդիկային փակիչներ՝ Փ10մմ տրամագծով: Կախիչները պատին ամրացվում են առնվազն 3 պտուտակ/դյուբելներով/ որոնք նախատեսված են առնվազն 45 կգ ծանրություն պահելու համար: Կախիչի համար օգտագործվող նյութերը պետք է լինեն էկոլոգիապես մաքուր: Կախիչի բոլոր մասերի միացումները պետք է իրականացվեն երաշխավորված, թաքնված ձգանների միջոցով և առնվազն ապահովեն կից գծագրում ներկայացված հատվածքի չափերի ամրությունը: Նմուշը /նկարը/ կցվում է: Ձգեստապահարաններ՝ ամբողջությամբ (բացառությամբ հետնապատից) պետք է պատրաստված լինի լամինացված 18մմ հաստությամբ ՓՏՍ-ից, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ, արտաքին չափսերը՝ 820x450x2100մմ (LxԽxԲ), որից 820x450x2000մմ (LxԽxԲ) հատվածը հանդիսանալու է օգտագործվող հատված, իսկ ստորին 820x450x100մմ (LxԽxԲ) հատվածը հանդիսնալու է որպես ոտք: 2 կողմերի 450x2100մմ ՓՏՍ-ներն պետք է լինեն ամբողջական, իսկ ոտքի հատվածը դիմացից փակվի ՓՏՍ-ով, միացումները պետք է կատարվեն մետաղական

	անկյունակներով, ոտքի հետևի մասը թողնել բաց:Զգեստապահարանը վերևից ունի 400մմ բարձրությամբ 1 դարակաշար, որը պահող դետալները պետք է ունենան առնվազն 22 մմ երկարություն և 5մմ տրամագիծ:Դեպի ներքև, 82-85մմ հեռավորությամբ տակից ամարցվում է ¾ դյույմ քրոմապատ, մետաղական երկաթյա ձող՝ համապատասխան ամրացումներով: Զգեստապահարանն ունի 2 իրար հավասար դուռ, դռները՝ լամինացված 18մմ հաստությամբ ՓSU-ից: Դռներն ամրացվում են 3-ական ծխնիներով: Դռները կունենան մետաղական բռնակներ: Աշխատանքային հարթության եզրերը կշրջափակվեն 0.8-1.2մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC): Աշխատանքային հարթությունը պետք է լինի անփայլ: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Հետնապատը պետք է լինի 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից(ԴՎՊ) և նույն ՓSU-ի գույնի: Հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8մմ է: Նստելու պարկ աթոռ (պուֆիկ) - ձևը՝ տանձաձև, չափսերը՝ ԲxԽxԼ 120սմx85սմx85սմ:Նստաելատեղի բարձրությունը հատակից՝ 35 սմ: Երկշերտ՝ արտաքին շերտը հանվող, շղթայով, փափուկ կահույքի պաստառապատման համար նախատեսված փափուկ բարձրորակ, դիմացկուն կտոր, ներքին շերտը՝ հավելյալ որակյալ կտոր՝ բիազ կամ համարժեք, կարը՝ ամուր: Լցանյութը պենոպոլիստիրոլե գնդիկներ՝ առավելագույնը 5 մմ, լցանյութի ծավալը՝ 260լ, լցանյութը հետագայում ավելացնելու հնարավորությամբ: Պուֆն ունի տեղափոխման համար նախատեսված բռնակ կամ բռնակներ: Նմուշը /նկարը/ կցվում է: Պայմանագրի կատարման փուլում պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը: